



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆԻՒՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՒՆԻՒՅ ՈՒՐԻԱԹ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1854

ԹԻԻ 477

ԶՄԻՒՆԻՒՅ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Պատերազմին և դեպքանական բանախօսութեանց այժմեան դժուար վիճակին մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի կը համարուիք յետապայ պաշտօնական նամակը՝ զոր Ռուսաց կառավարութիւնը կը յուզարկէ Վաստիոյ դահլիճին՝ ի պատասխանի իւր վերջին ծանուցադրոյն : Վաստիոյ դահլիճը յայտնի կրտսնուի Վաստիոյ և Ռուսաց կառավարութեան մէջ եղած ծանր ցրտութիւնը, որ կրնայ շուտով փոխադրուիլ բարեկամական յարաբերութեանց դադարման քառորում Ռուսիոյ դահլիճը դաւնապէս կը գանձէ քառի ընդդէմ Վաստիոյ կառավարութեան՝ որ արև մտեան տէրութեանց հետ միաբանած է ի վնաս Ռուսաց կայսրութեան : Հաւաստի այս կարևոր գրութեան թարգմանութիւնը զոր Աւստրիոյ օրագրիւնները կը հրատարակեն :

Բեռլին, 14-26 օգոստոսի 1854.

Վաստիոյ դահլիճին՝ ի վիճակին,

Վաստիոյ դահլիճին՝ օգոստոսի 10 ամսութեամբ առ մեզ յուզարկած ծանուցագիրը ընկալայ և մատուցի վեհափառ կայսեր :

Վաստիոյ տէրութիւնը յայտնած էր մեզ իւր փոփոխութիւնը որ ևս առաւել չընդարձակուի մեր զինուորական գործողութիւնները թուրքաստանի մէջ և Վանուսի իշխանութիւնները գտնուած մեր զօրք ետ կանչուի : Վրդ՝ անոր ցանկութիւնը ի գործ գնելով, դիտաւորութիւններու որիչ բան չէր բայց միայն Վաստիոյ և Վերմանիոյ օգուտները հաստատուն պահելը, ըստորում այս պատճառաւ եղած էին մեզ յիշեալ խնդիրները : Ինչքան որ զինուորական հետևողները հետևում են Վանուսի տէրութեանը, որ անոր փերահաստատել յօգուտ մեր գնաւատարակչութիւնը կացութեանց պատերազմին գործողութեանց ընդարձակ տեսարանին վրայ : Իսկ յայտնակ յիշեալ զինուորական պատճառաւ որիչ վրանդի մը մէջ ևս պիտի ձգեիք

զինուորական Վանուսի, Վանուսի և թուրքաստանի զօրքը ամէնը մէկ տեղ խուռն բազմութիւն պիտի յարձակէին Սեֆօպոլիս մէջ եղած Վրդի և Աւստրիոյ մեր ծովեզերացի վրայ :

Վաստիոյ գրութիւնները և բացայայտ վտանգները մեկ կողմ ձգելով, և Վաստիոյ ու Վերմանիոյ փոփոխութիւնը աչքերնուս առջև ունենալով՝ յայտնած էինք թէ պատրաստ էմք կամովին ու կատարելապէս պարզել Վանուսի իշխանութիւնները : Վրդ մեր հակառակորդաց կողմանէ փոխադարձ պայմաններ պահանջէն կը հրաժարէինք, և անոնցմէ ամենին բան մը չէինք խնդրել : Միայն կը ծանուցանէինք Վաստիոյ կառավարութեանը թէ կը ցանկանայ իմանալ ապահովութեան երաշխաւորութիւնները, զորս անձամբ կրնար տալ մեզ : Վարձեալ՝ գուշակելով թէ իւր իշխանութեան կախեալ չէր զինուորագրում մը ապահովել մեզ՝ կը ցանկանայինք իմանալ գտնել, թէ յիշեալ իշխանութիւնները պարզուելէն ետքը՝ սրով արև մտեան տէրութեանց հետ իւր գաղտնաբար պարտաւորութիւնները ի գործ դրուած պիտի ըլլան, Վաստիոյ վրայ վտանգութիւն կրնայինք ունենալ թէ պիտի դադարի միաբան և գործակից ըլլալ յիշեալ տէրութեան հետ՝ որոց բացայայտ նպատակն է բարոյական և նիւթական կերպիւ նուստատանել և խնայել ցրտի վտանգները :

Միևնոյն ժամանակին, և մեր խաղաղասիրական դիտաւորութեանց ապացոյց մը տալու համար, կը յայտնէինք թէ այժմէն պատրաստ էմք մեր հաճութիւնը տալ ապրիլի 9ին նախագրութեան մէջ յիշատակուած սկզբանցը :

Պատանակ ուղղակի պատասխանելու մեր խնդիրներուն, որոնք ուղղակի յուզարկուած էին իրեն, Վաստիան արժան համարեցաւ արև մտեան տէրութեանց առջև գնել գործը, և անոնց որոշումներէն կախեալ տալ այն որոշումը՝ զոր իրմէ միայն ընդունել կուզէինք :

Ուստի յայտնի էր որ, Վաստիոյ մասնաւոր օգտիցը համար և բոլոր Վերմանիոյ շահուն համար մեր ընկալած զօրք արժէք մը չէր կրնար ու-

նենալ Վանուսի և Վանուսի աչաց առջև, և այս երկու կառավարութիւնները, որոց նպատակն է ընկճել և տիրացնել զՎանուսի երկրագնակը զպատերազմը, յօժարամտութիւն չունենին հաշտութեան շուրջը մտնել : Եւ այս մեր բաժնէրը դժբաղդաբար հաստատուեցան ի ծանուցադրոյն զոր յանձնեց մեզ Աւստրիոյ կառավարութիւնը (Վաստիոյ դեպքանը որ ի Վեգրուպոլի) :

Եւ իրօք, Վաստիոյ դահլիճը այժմ կը յուզարկէ մեզ, իբրև վախճան փորձի և Վանուսի արքունեաց հետ ունեցած իւր խորհրդակցութեանցը, նոր հիմունքներ հաշտութեան, որոնք ի մասին ոճոյն այնպիսի անվայել չ կերպիւ դրուած է որ պատուաւոր եղանակաւ չկրնար ընդունուիլ, իսկ անոնց նշանակութեան մասին չէմք կրնար խաբուիլ վտանգի Վանուսի կառավարութեան վայելութեանը համեմատ, որ յայտնի կրտսնուի պաշտօնական հրատարակութեան իւր պատասխանեցոյն առ գահլիճին Վանուսի, Վաստիոյ օգուտ և հաստատութիւնը ըստով որիչ բան չիմացուիլ, բայց միայն մեր յատուցաբան ըրած ամէն գաղտնաբար ընդունելու մեր ամէն ծովային հաստատութեանց քանդումը (որոց հաւատարակչու ուրիշ գործութիւն մը չըլլալուն համար, մշտնջենաւոր սպառնալիք մը էն, կրտսն, օսմանեան տէրութեան դէմ) և Ռուսաց իշխանութիւն սեղմումը Սեֆօպոլիս մէջ :

Ի վերայ այս ամենայնի, ասոնք են հիմունքները համար Վաստիոյ կառավարութիւնը յանձնարարութիւն կրնէ մեզ, և թէպէտ կը յորդորէ զմեզ ընդունել զանոնք առանց պայմանի, սակայն արժան կը համարի իմացնել մեզ միանգամայն թէ ծովային տէրութիւնները իբրև կատարելապէս սրտեալ չեն համարիլ ամենին նոյն հաշտութեան հիմունքը և հարկուոր եղած ժամանակ իրաւունք պիտի ունենան փոխելու զանոնք պատերազմին դիպուածական յաջողուածոցը նայելով : Հետևաբար թէ և ընդունելու ըլլանք յիշեալ հիմունքը, դարձեալ հաւատարման խաղաղութիւն մը պիտի չունենանք թշուաճութեան գործոց գաղտնաբար իրայօք : Վաստ-

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կրնի ի վրանութեան ասիւնը ըստ կանոնաց բնութեան ինքնոր պիտի վարուի :

Վանուսի կեանքի մէջ կրնիլ իր սիրոյն պատուը կրնաւորի, որ իր ծոցը մեծնալով կամ հաստատուելով կատարեալ մարդ կը ըլլայ, ըսել կուզեմ որ կրնիլ կը յղանայ կամ յղի կը ըլլայ : Զղի կրնի մը կանոնաց վիճակին համար սահմանուած պիտի ետքի կամ վերի ատարձանը կը հասնի ատանկ կրնի մը պարտի երկրորդ գրախա մըն է, ուր նորէն մարդ մը կը ստեղծուի, և Վաստիոյ փառքը կը քարոզէ, ասանկ կրնի մը մարդկային ընկերութիւնը պատերազմներով, սովով ու հիւանդութիւններով ջնջուելէն կը պահէ, ուստի և արժանի է՝ որ ամէն մարդ անիկա յարգէ ու պաշտպանէ :

Իսկ սրջափ որ աս յղուութեան վիճակը պանծալի է, այնչափ ալ զօրուոր ու մեծ են այն պարտքերը, որոնք ան վիճակը կրնան վրայ կը գնէ ու աս պարտքերը աղէկ կատարելէն երկու մարդու օգուտը, այսինքն մօր ու իր զուգին առաջը Վանուսի նաև կեանքն ալ կախում ունի : Զղի կրնիլ իր յղուութեան ատենը բնութեան կանոններուն համաձայն ապրելու ըլլայնէ՛ իր առաջը Վանուսի ստուգիլ անվնաս կրնիլ, ամէն հիւանդութիւնները կը հեռացնեն կամ կը թնկան :

ցրտէ, ու զուստիւթութիւնը կամ ծնունդը գիւրի կը ըլլայ : Եւ ևս զուգին համար ալ շատ օգտակար է իր մօրը յղուութեան ատենը բնութեան համաձայն կեանք անցնելը, ինչու որ ասով անոր գործարաններուն կազմութիւնը կատարեալ կը ըլլայ, միտքը ու բնաւորութիւնը աւելի առայգ կամ վտու վտու ու մաքուր կը ըլլան, ու իբր թէ իր առողջութեանը, աղու որութեան, մարմնոյն ու ժաւարութեանը, մէկ խօսքով ըսեմ բոլոր իր կենացը երջանակութեանը հիմը հաստատուն կը դրուի :

Իրա ի մարդ չկրնար արցունքը բռնելու չիլալ, երբ որ կրտսնէ թէ քանի քանի յղի կրնիլ ներ կամ մայրեր ան երևելի ժամանակը, այսինքն ծոցուոր եղած ժամանակին բնութեան օրէնքին ու կամքին դէմ կեանք անցնելով, իրենց անձին ու ներսի գիւնի կրած տիրա զուգին, որ դեռ նոր կը ստի պարելու, մեծամեծ վնասներ կուտան : Հոս խօսքերնիս անանկ աղքատ կրնան համար չէ, որուն ողորմելի վիճակը ու աղքատութիւնը թող չտար որ ինքզինքը աղէկ նայի, շատ չաշխատի, որնոր իրեն ու իր ընտանեացի ապրուստին համար պիտի հոգ տանի, ու մինչև իր յղուութեանը ետքի օրերը պիտի ծանր աշխատութիւնները պիտի յանձնանէ ան ալ կարտաթիւն ու նեղութիւն քաշելով : Հասցա խօսքերնիս՝ չափե աւելի բարակցած կամ փոփոխեաց, փոփոխեց, ու նորաձևու-

թեանց (ծափանք) ետեւէ ի ներսով տիրացած կրնիլ կրտսն վրայ է, որոնք բնութեան կարգին ու կանոնացը դէմ ապրելով՝ մարդու մը հաստատուն կեանքի հասնելուն արդէլ կը կրնեն, ու կեանքը նոր սկսող անձի մը կանոնակարգ մեծ ներուն կամ կորսուելուն պատճառ կը ըլլան : Մհաս կատրիս մէջ մարդիկ անասուններէն սրջափ աւելի վար կը ըլլան, ու ինչչափ մայրեր իրենց ամօթ ու նախատիքը սեպելու են՝ երբ որ կը գիտեն ու կը տեսնեն թէ այն անբան կենդանիները իրենց ապագայ զուգրներուն համար ինչչափս գուրտ ու խնամք կը ցուցնեն, իսկ իրենք իրենց զուգրներուն դէմ ինչչափ անգութ ու անողորմ են : Իսկ հիմակ աս անկարգութիւնները ու ցաւալի մամուլքները մէկ ի թողուք, ու բարեփոխ և զուստիւթ մայրերուն քանի մը օգտակար խրատներ ու կանոններ ցուցնելք, որոնք բնութիւնը կը սորվեցնեն, ու յղի կրնիլ ըլլալք է որ անոնց համաձայն ապրին, թէ իրենք ամէն վնասներէն աղտա ու ապահով մնալու համար, ու թէ իրենց զուգին այն ամէն բարեբը տալու համար, որոնք անիկա կրնայ ընդունիլ :

Զղուութիւնը կամ ծոցուորութիւնը հիւանդութիւն մը չէ, հասցա կանոնաց մարմնին առողջութե մէջ կատարելու մէկ պաշտօնը կամ գործքն է : Ինքնութիւնը առողջ յղի կրնան մը ու յղի ըլլող կրնան մէջ միայն աս տարբերութիւնը

բից կառավարութիւնը՝ բայց յայտնակէ կը յայտնէ մեզ թէ, ըստ իւր դատողութեան այս հիմունքը կը ծագին նախագրութեան սկզբունքներէն և հաստատուն ու տեղական հաշտութեան մը հարկաւոր պայմաններն են, հետեւաբար կը ծանուցանէ մեզ թէ ինքը ևս այս պաշտանաց վրայ կատարելագոյն հաստատուն կը մնայ և թէ կերպագոյն պարտաւորեալ է արեւմտեան տէրութեանց առջև, որպէսզի ուրիշ որ և իցէ հիմանց վրայ չեղանար մեր հետը :

Այս պարագայից մէջ անօգուտ է մեզի համար՝ քննել և տեսնել այնպիսի պայմաններ, զորոնք թէև ընդունելու կառավարիկն մեզ, բայց և այնպէս շարժուն և փոփոխական կը համարին : Կարծեալ անօգուտ է մեզ քննել այնպիսի պայմաններ, որ եթէ անփոփոխ ևս մնալու ըլլան ինչպէս որ առաջարկուած են մեզ այժմ, պիտի ենթադրուի թէ Ռուսիան արդէն տկարացեալ է երկար պատերազմի մը յոգնութենէն : Այլև եթէ դէպքերուն վաղանցուկ զօրութիւնը ևս պարտաւորեալ ըլլար զմեզ ընդունիլ նոյն պայմանները, անով՝ փոխանակ հաստատուն և սանաւանդ տեղական խաղաղութիւն մը ապա հովնելու Ներսիսի, ինչպէս Վաստրիյ կառավարութիւնը կերեւի թէ կը կարծէ, ընդհանուր առմամբ նոյն խաղաղութիւնը անվերջանալի չի թուութեանց ներքեւ պիտի դուրսի : Ռուսաց կայսրը իւր հաճութիւնը տալով նախագրութեան մէջ յիշուած սկզբունքը, դիտաւորութիւն չունէր ամենեւին այնպիսի նշանակութիւն տալ անոնց, ինչպէս որ այժմ կուտան :

Այնքան զոհը՝ զոր պատրաստ էինք ընելու Վաստրիյ և Կերամիայ մասնաւոր օգտիցը համար՝ առանց փոխարինութեան մնալով Վաստրիյ կողմանէ, և այս տէրութիւնը փոխանակ մեր ընելու զոհին պատճառաւ միջոց մը գտնելու իւր մինչև յայնժամ յանձն առած պարտաւորութիւնը վրայէն ձգելու, արժան համարեցու ընդհակառակն միաւորիլ մեզ թշնամի եղող տէրութեանց հետ աւելի զօրաւոր և աւելի ընդարձակ պարտաւորութիւններով, ուստի կը ցուցնէ մեծապէս որ չեմք կրնար իւր վերջին ծանուցագրոյն պատասխան տալ : Արկարծեմք թէ այժմեան մեր կացութեանը մէջ մեր պատուոյն համաձայն եղած ամէն զիջումները ի դարձ դրինք, և մեր մտերիմ ու խաղաղասէր դիտաւորութիւնները չընդունուելով, ուրիշ բան չմնար մեզ ընելու բայց միայն ակամայ հետեւիլ այն ճանապարհին որուն մէջ գրին զմեզ նոյն իսկ մեր հակառակորդները : այսինքն թողուլ, ինչպէս իրենք կը թողուն, որ պատերազմին դիպուածական յաջողութեամբ վճռեն գեպանախօսութեանց հիմը : Վաստրիյ կառավարութեանը արդէն իմաց տրուած է թէ միմիայն զինուորական մեր հար-

կաւորութեանցը պատճառաւ (Ռուսաց) կայսրը արժան համարեցաւ հրաման տալ իւր զօրացը Փրութ գետոյն ետեւը քաշուիլ : Ռուսի մեր սահմանաց մէջ վերստին մտնելով և պաշտպանողական ընթացք մը բռնելով, պիտի սպասեմք այս կացութեան մէջ այնպիսի արդարացի առաջարկութեանց, որ թոյլ տան մեզ հաշտութեան համար ունեցած մեր փոփոխուող համաձայնել մեր արժանաւորութեանը և մեր քաղաքական օգտիցը, զգուշանալով կամաւ գրգռել չի թուութեանց աճում մը, բայց միանգամայն որոշեալ ըլլալով մեր երկիրը հաստատուն մտք պաշտպանել ընդդէմ օտար յարձակման մը, որ կողմէն որ գալու ըլլայ :

Կընդգրկեմ որ Ձեր Վսեմութիւնը բարեհաճի հաղորդելու առաջիկայ պաշտօնական նամակը Պուլ կոմսին (Վաստրիյ արտաքին պաշտօնէին) : Ինկաւարութեամբ զհաւաստիս ակնածական յարգանաց իմոց :

ՏԸ ՆԵՍԸԱՆՈՍ

— Այնպիսի մէջ ընդհանրապէս կը կարծեն եղբ. թէ Վեփադապոլի դէմ եղած յարձակումը պիտի չարգելու զինուորական գործողութիւնները, որ առաջարկուած են Վաստրիյի դէմ ըլլալու : Այս օրագիրը՝ զինի զուցե թէ դաշնակից նաւատորմիկները Վեփադապոլի բերդերը պիտի քանդեն և Ռուսաց նաւերը պիտի այրեն, կը յարէ թէ նոյն դէպքերը Վեփադապոլի պիտի հասնի խռովի ծովեզերքը գտնուած ամէն ամբողջութեանց և թէ Օտէսայի ամբողջութիւնները անգամ պիտի չլսնայուն :

Ուրիշ գաղղիարէն օրագիր մը Վիֆի Սոլոմոնովիչի ըստած, կը գրէ թէ զիարդ և իցէ, դաշնակից նաւատորմիկը կողմանէ այցելութիւն մը պիտի ըլլայ Օտէսային . քանզի այս երեւելի քաղաքը՝ փոխանակ առևտրական խաղաղասէր քաղաք մը ըլլալու, այնպիսի կերպիւ ամրացաւ, որ անոր զինուորական ծանրազինութիւնը դաշնակից զօրապետաց ուշադրութիւնը իւր վրայ հրակիրեց և հետեւաբար որ և իցէ խորհրդածութիւն մը պիտի չի կրնայ արգելուլ որ խաղաղ շարժում յիշեալ քաղաքին դէմ : Եթէ նոյն ինքն Օտէսայի կառավարութիւնը կը ցուցնուցանէ յայտարարական թղթով մը թէ գուցէ պիտի պարտաւորին այրել և քանդել քաղաքը, յայտնի է որ թշնամեաց նաւատորմիկը պարտաւոր չէ խընայել Ռուսաց կառավարութեան ստացուածոց, ի պատճառս որ անոնք մասնաւոր անձանց ըստացուածոց մէջ տեղը կը գտնուին :

Օտէսայէն հետեւեալ տեղեկութիւնները կուտան Վէնայի Այս օրագրոյն :

«Վեր քաղաքին ժողովրդեան այժմեան կացութեանը վրայօք դաշտափար մը տարու համար ձեզ, արժան համարեցի յուղարկել ձեզ յետա-

գայ յայտարարութիւնը, զոր ամէն փողոցաց անկիւնները կ'աչուցին :

«Վա բնակիչա Օտէսայի :

«Սամանակ առ ժամանակ թշնամին նորէն կը տեսնուի մեր քաղաքին մօտերը առաջընկէն աւելի մեծ ուժով : Սակայն մեք ևս զինուորակեմք և աղէկ պատրաստուած : ուստի մեծ գործունէութեամբ և ամենայն զօրութեամբ պիտի կրնանք դէմ դնել ցամաքը ելլելու փորձի մը մեր թշնամեաց կողմանէ : Սակայն թշնամեացները, որով թշնամեաց նաւերը կրնան սմբակոծել զմեզ, շատ հեռու կերթան . բայց և այնպէս մի վայրէջք, քանզի ասոր դէմ ևս դարձան կայ : Թրքած լաթեր և եղի մորթեր պատրաստ ունեցէք, և անոնցմով խիտն ծածկեցէք զհրախից բուռները, զորս թշնամին կրնայ նետել քաղաքին մէջ : այլև ջրով լեցուն ամաններ պատրաստ պահեցէք տանիքներուն վրայ, որպէսզի կարող ըլլաք մարեալու զհրկիզութիւնը :

«Վ վերայ այս ամենայնի եթէ թշնամին ընդ պաշտպանութեամբ այնպիսի հեռու գացող թշնամեաց, յամառութեամբ շարունակելու ըլլայ զպատերազմը, պիտի քաշուիմք ՚ի թաղապօլ : Բայց յառաջագոյն պիտի փոխակերպեմք քաղաքը աւերակաց և միտրոյ կոչոյ մը, որպէսզի թշնամին ապատանարան մը չի գտնայ և վայ անոնց որ պիտի մնան յայնժամ և պիտի ջանան մարելու զհրդեհը :

«Օտէսա, 18-30 օգոստոսի 1854 :

«Գրիգոր ԶէնՍՈՒԲԻՐՆ, Խառաղիչ :

«Վերին է երեւակայել այս յայտարարութեանէն յառաջ եկած տպաւորութիւնը : Վրդէն ցորենի պաշարաց մէկ մեծ մասը փոխադրեցաւ ՚ի թաղապօլ : Թշնամեաց տորմիկներուն նաւերը իբրև ոգի մը կանցնին մեր աչաց առջեւն . ուստի երեք օրէ ՚ի վեր պահապան զօրքերը միշտ ոտքի վրայ են : Յուզմունքը վերջին աստիճան հասած է : Փողոցներուն սալաշատակները ըստ մեծի մասին քանդեցին և մեր քաղաքը՝ որ հաւանականաբար տահմանեալ է կործանման և աւարառութեան, խիտ սղորմի վիճակի մը մէջ կը գտնուի : Օրը քանի մը ժամ զինուորացեան կը թուութիւն ընել կուտան ամէն բնակչաց, որ կարողութիւն ունին զէնք բռնելու :

«Նոյնէն գոֆ հրամանատարին պատրաստութեց վրայ դատողութիւն ընելով, ծովեզերիայ քաղաքաց պաշտպանութիւնը իրատ յամառութեամբ պիտի ըլլայ : Եթէ ուրիշ բարձրագոյն հրաման գալու չլլայ, Վաստրիյ զօրքեր յուղարկեցին որ Վրափնանք, Վարնաթ, Վլէքսանաբովք և ուրիշ քաղաքները գտնուած դատապարտեալ կարանաւորները բերեն, և գործածեն ՚ի շինութիւն ամբողջութեանց ծովեզերաց և յետ այնորիկ ազատ թողուլ գաննք, եթէ անհրաժեշտ չարկ

գրած է՝ որ յղին աւելի զգայուն կը լլայ . ասոր օգուտն ալ ան է որ ասանկ կնիկը իր մարմնին անվնաս մնալուն համար աւելի հոգ ու խնամ կը տանի, ու զգուշութիւն կընէ՝ որ իրեն շատ ու զօրաւոր աղղեցութիւն ընող (վնաս տուող) բաներէն հեռու կենայ : Իսկ ասկից ՚ի գտն՝ յղի կնկան մը կարօտութիւնները ըստ ամենայնի ուրիշ կանանց պէս է : Անիկ մը՝ որ բնութե կանոնացը համաձայն ապրելու սովոր է, իր ծոցուորութեանը ատենը իր սպրեւու կերպը ու կարգը փոխելու ամենեւին հարկաւորութիւն չունի : Անիկ մը իր յղութեան ժամանակը ապահովապէս անցընելու, զաւակաբերութեան ատենը շատ դժուարութիւն չեքաշելու, ու առողջ զաւակ ունենալով ուրախ ու զուարթ մայր մը ըլլալու համար աս միջոցները պէտք է որ բանեցընէ . բանաւոր ու բարի քաղաքավարութիւն ունենայ, միաբը զբաղած բայց զուարթ ըլլայ, կերակուրը չափով բայց բաւական ըլլալու չափ ուտէ, քունը չափաւոր ու բաւական ըլլայ, ուրիշ ամէն բաղձանքները կարգով ու չափով կատարէ . շարժումը (պտտորիլը) ու հանդիստը իրարու համեմատ կամ կարգաւորեալ ըլլայ : մէկ խօսքով ըսեմ, ամէն բանն անանկ ընէ, ինտոր ու ինչպիսի որ բնութիւնը կը պահանջէ :

Բայց յղի կնկան մը ամենեւին աւելի վնասակար բանը՝ զեն բերելու բաներէն վախնալը, ու անոնց համար հոգի ու մտմտութի մէջ ըլլալն է :

Այս հոգը ու մտմտութե խեղճ կնիկը միշտ սրտաւորութեան ու սուկալի անհանգստութեան մէջ կը լսեն : ասով իր դաշտութիւնը, որնոր արդէն մեծ ու զօրաւոր է, չափէ աւելի կը քատկանայ : պինդ պղտիկ պատճառ կամ գրգռում մը իր վրան մեծ աղղեցութի կընէ, բանի մը վրայ քիչ մը դժկամակիլ կամ բարկանալը զինքը տակնու վրայ կընէ, քիչ մը վախը մեծ սուկում կը բերէ, ու ասանկով ան վնասը, որնոր ինքը իր մտմտութեամբ գլխէն պակսեցընելու կաշտատի, իր անձին և ունեցած զուկին համար աւելի կը մեծնայ : Ռուսի մայր ըլլողը պէտք է որ հանդարտ ու հանգիստ սրտով կայրի, ու ամէն վնասակար աղղեցութիւններէն կամ պատճառներէն մէկը ի կենայ . ու թէ որ յանկարծակի անյարմար ու վնասակար բան մը իրեն կը պատահի՝ սրտտուութիւնով ու առանց չիտթելու դէմ կենայ . ու սուկալի գիտնայ թէ որքա՞ն աւելի ան բանը կարճամարհէ ու բանի տեղ չի գնէր, այնչափ քիչ անոր վնասը կը տեսնէ :

Հոգւոյ հանդարտութիւնը, կամ ներքին խաղաղութիւնը ու հանգիստը՝ մարդուս պինդ առջի մեծ մեծ երջանկութիւնը, ուրիշ ամէն վայելումներէն և ուրախութիւններէն հիմը, ու առողջութիւնը և կենանքը երկայն ատեն անվնաս պահելու խիտ զօրաւոր միջոցն է : Հոգւոյ հանդարտութիւնը մարմնին ամէն գործքերը աղէկ կատարելու կօքնէ, ինչու որ աս գործքե-

րուն ամէնն ալ հանդարտ ու ինք իրեն գոհ ըլլող մտքին աղղեցութեանը տակը իրարու հետ կատարեալ հաւատարաշատութիւն ու կապ մը ունին, ու աղէկ կարգով ու զօրութիւնով միշտ յառաջ կերթան : Իսկ կիրքերը, հոգիին ալեկոծութիւնները կամ խառնութիւնները, ու լքումը կամ վնասութիւնը ու սրտաբեկութիւնը կենաց պինդ մեծ թշնամիներն են . ասոնք ըզբուն գործունէութիւնը կամ գործիլ կանոնաւոր կարգէն դուրս հանելով կամ շիտթելով, կամ չափէ աւելի սաստիկացընելով՝ կենաց աղբիւրը վտանգի մէջ կը ձգեն, որովհետեւ ըզբը կենաց արմատն են, ու անոնց գործունէութիւնը որքա՞ն աւելի կամ պակաս է, կենսքն ու յայնչափ աւելի երկայն կամ կարճ, առողջ կամ վատառողջ կը լլայ : Եւ մօրը քաշած ցաւերէն ու նեղութիւնէն՝ զաւկին սնանելուն, կանոնաւոր կարգութեանը, աճելուն ու աղղեցութեանը որքա՞ն մեծ վնաս գալու յայտնի կերակայ, երբ որ կը յիշենք որ զաւակը միայն մօրը հիւթերէն կը սնանի ու կը կազմակերպի : Ռուսի թէ որ մայր մը իր զաւկին ինչ որ ՚ի բնութեան տալու պարտական է՝ իրօք տալ կու գէնէ՝ պէտք է որ իր առջի ու անսնորհիւն (ֆի-ֆի-ֆի) հոգը ու ջանքը իր կենանքը գոհ ու հանդարտ սրտով անցընելու իրաւի յղի կնկան մը համար շատ դժուարաւ ստանալի բան մըն է, որովհետեւ յղութիւնը

կըլլայ քաշուի կամ փախչիլ :  
Վերականգնող շփոթութիւնները որ անդա-  
դար կը ծագին թէ հրանի արքունեաց մէջ, իմա-  
ցուցին Վեդիկայ կառավարութեանը թէ հար-  
կաւոր է նոր երեսփոխան մը ունենալ յիշեալ  
մայրաքաղաքը : Աւստի միտար Վիւրթէյ, որ եր-  
բեմն ընդհանուր հիւստատու էր յիշեալ  
այժմ գեւապան ի Վեդնա Օլիպէոսի մէջ, Վե-  
ծին Վրիտանիայ լիակատար իշխանութիւն : ունե-  
ցող գեւապան կարգեցաւ ի Վարսիաստան : թայդ  
օրագիրը կրտէ, թէ ասկէջ լուսագոյն ընտրու-  
թիւն մը չէին կրնար ընել և չեմք տարակուսիր  
թէ գործունէութիւնը և յաջողակութիւնը  
միտար Վիւրթէյին՝ խիստ փրկաւէտ ազգեցութի  
մը պիտի ունենայ ինչպիսի Շահին քաղաքա-  
կան ընթացքին վրայ :

Մարտիկայի Սեֆորին սեպտեմբերի 9-21  
թուոյն մէջ հետեւեալ յօդուածը կը կարդամք :  
«Վերամանկայէն հասած վերջին լուրերը կը ծա-  
նուցանեն թէ նոր տարածայնութիւն մը երևան  
ելած է Վաստիոյ և Վրուսիոյ մէջ ի մասին ա-  
րևելեան խնդրոյն : Այս երկու տէրութիւններ  
ընդ գերմանական ազգային ժողովոյն (տիեզ) բա-  
ցարութիւններ տալու վրայ ըլլալով ի մասին  
իրենց ընթացքին առաջի արևմտեան տէրութեց  
և Ռուսիոյ, հարկաւորութիւն ունեցան խոր-  
հրդակցիլ իրարու հետ քաղաքական համաձայ-  
նութեան մը հասնելու նպատակաւ : Աւստի  
պայմանաւոր մը խնդրեցին, զոր անշուշտ պիտի  
արդիւնաւորեն իրարու փոխադարձ այնպիսի  
զինու մեք ընելով, որպէսզի կարող ըլլան ծածկել  
իրենց ներքին երկարատևութիւնը գերմանա-  
կան տէրութեանց առջև : Վայց իրենց ձգուե-  
քը ըստ այսմ մասին ինչեւիցէ վախճան ունենա-  
լու ըլլան, ամենին ազգեցութիւն մը պիտի չի  
կրնան ընել քաղաքական գործոց ընդհանուր  
ընթացից վրայ : Վանդի Վաղդիան և Վեդիկան  
պիտի շարունակեն միշտ ի գործ դնել Վարսիա-  
նութեամբ և հաստատուն մտք իրենց խորհր-  
դոց կատարումը : Եւ պիտի կրնան պարտաւո-  
րել Վրուսիան ընդունելու զհաշտութիւնը այն  
պիսի արդարացի պայմաններով, որոնցմով Վ-  
րուսիայի և Վրուսիայի անդորրութիւնը ապա-  
հով մնայ յայսմ հետէ : Վ վերայ յայս ամենայնի  
զարմանալի է որ թէպէտե Վաղդիան և Վեդիկան  
գերմանական տէրութիւններէն աւելի օգուտ  
չունին հաստատուն պատուար մը գնելու Ռու-  
սիոյ իշխանասիրութեանը դէմ, բայց և այնպէս  
մինակ կը պատրաստին և մինակ կը լծարեն  
զժողովը այնպիսի գործառնութեան մը, որուն  
օգտիցը Վրուսիայի ամէն տէրութիւնները մաս-  
նակից պիտի ըլլան :  
«Եւ յիշուի պատմութիւնը գեթ արութիւն  
պիտի ունենայ բացատրելու Վաստիոյ և Վրու-

սիոյ տարակուսութիւնները այսպիսի խնդրոյ մը  
մէջ՝ որ առանձին կերպիւ մը Վերամանկայ անկա-  
խութեանը կը լինար բերի, և որուն որոշումէն  
կախեալ է քաղաքական և առևտրական ապա-  
գայն այս մեծ ազգին : Ռուսիոյ հետ աւրուե-  
լու գեթ անկախութիւնը որ Վաստիոյ և Վրու-  
սիան յայտնեցին և կը յայտնեն տակաւին այսօր,  
զարմանալի գործ մըն է . քանզի ամենին չհա-  
մաձայնիր իրենց դատողութեանը և վճռոյն զոր  
արևմտեան տէրութեանց հետ ըրին ընդդէմ  
իշխանասիրութեան Վեդրոպուրկի գահաձին,  
նմանապէս չհամաձայնիր իրենց ընդունած սկզբ-  
բանցը ի մասին Ռուսաց կայսերէն պահանջու-  
երաշխաւորութեանց :

«Վայտնի կերպիւ ճանաչել թէ Ռուսիան ան-  
ընդունելի խնդիրներ կառաջարկէ Վարսիայոյն  
Վրան որոնք հակառակ են Ռուսիանին արժանա-  
ւորութեանը և անկախութեանը, թէ Վրուսիայի  
մէջ օտար երկրի վրայ բռնի յարձակողի յան-  
ցանքը ունեցաւ, թէ միայն ինքը (Ռուսիան)  
վտանգի մէջ գրաւ Վրուսիոյ անդորրութիւնը,  
թէ Վարսիայոյն Վրան առաջարկած իւր պա-  
հանջունքներէն չկայ մէկը՝ զոր հարկ չըլլայ ա-  
մենայն զօրութեամբ մերժել, թէ հարկաւոր է  
ստիպել զնա (զՌուսիան) որ հաստատուն երաշ-  
խաւորութիւններ տայ գեւապանական գլխաւոր  
արձանագրութեամբ մը՝ որպիսիլու համար որ  
յետ այսօրիկ չկրնայ վտանգի մէջ ձգել աշխար-  
հիս ընդհանուր խաղաղութիւնը . արդ այս ա-  
մէն բաները ճանաչելէն և խոռոտվանքէն ետև  
դարձեալ չուզել գործել այս յայտարարութեց  
և այս սկզբանց մտօք, երկրպայտիան կոչուեց  
մը մէջ մտնել ըսելէ, որ անարժան է առաջին  
կարգի տէրութեանց : Վարձեալ իր բն կառա-  
վարութիւն իւր գործքերը իւր յայտնած կարծ-  
եացը և գաղափարացը հետ հակասական վիճակի  
մէջ գնելէ, և իր բն գառաւոր մերժել ըսելէ  
հրամայելու որ ի գործ գնեն իւր տուած վճիռը .  
Օխարդ և իցէ կերպիւ մտածելու և քննելու  
ըլլայ մէկը զգեթութիւնը գերմանական երկու  
մեծ տէրութեանց առաջի կուռոյն զոր գրգռեց  
Ռուսիան, ուրիշ պատճառի մը չտրուիր յիշեալ  
զգեթութիւնը բայց միայն սխալ գաղափարաց՝  
զորս Վաստիոյ և Վրուսիոյ քաղաքական ան-  
ձինքը ունին իրենց հայրենեաց ճշմարիտ օգտի-  
ցը վրայ, Փորձը և ժամանակը պիտի ցուցնեն  
թէ աւելի աղէկ պիտի ըլլար իրենց համար չթա-  
ղուլ միայն Վաղդիայ և Վեդիկայ վրայ զճանրու-  
թիւնը պատերազմին՝ որ այնպիսի գործոյ մը  
յաղթանակի համար կըլլայ, որուն արդարութիւնը  
իրենք ևս կը հրատարակեն :

«Վ վերայ այս ամենայնի կը պարտաւորինքը  
սեղու, թէ քանի մը օրէ հետէ աւստրիական  
լրագրութիւնները յայտնի կերպիւ կը ցուցնեն  
զհամակրութիւնը, զոր ունին գաղղիացի և անգ-

ղիացի նաւաստեաց և զինուորաց վրայ՝ որոնք  
Վրուսիայէ քաջած են պատերազմելու համար  
Ռուսաց զօրաց դէմ : Այլ ամենին չեն տա-  
րակուսիր խորմի վրայ եղած արշաւանքին յա-  
ջողութեանը վրայ : և այժմէն իսկ կը ծանուցա-  
նեն թէ Վեդիկայոյ պիտի քանդուի, նմա-  
նապէս ամէն ամրութիւնները յիշեալ թերա-  
կզւոյն պիտի կործանուին : Աւստի յայտնի կը  
տեսնուի թէ ամենին պիտի չտաւին երբ այս  
գէպքերուն լուրը առնելու ըլլան :

Վաշնակից զօրաց խորմի վրայ արշաւանքը  
մինչև ցայսօր յաջողութեամբ պատկուեցաւ  
միշտ : Սեպտեմբերի 7ին Վրուսիայը ըստած գե-  
տոյն մտերը հասնելով, գաշնակից զօրքը հե-  
տեալ օրը ամենայն զօրութեամբ յարձակեցան  
նոյն գետոյն մօտ եղած բլուրի մը վրայ . զոր  
Ռուսերը ահագին կերպիւ ամրացուցած էին և  
100 թնդանօղով ու 50 հազարի չափ զօրքով կը  
պաշտպանէին առաջնորդութեամբ Վեդիկոյն  
իշխանին, Վայց գաշնակից զօրքը, որոց թիւը  
40 հազարի կը հասնէր, սաստիկ եռանդեամբ ու  
մեծ քաջութեամբ թշնամոյն վրայ յարձակելով  
եօթը ժամու չափ ահագին պատերազմ աւարիւ-  
նահեղութիւն եղու, և Ռուսերը պարտաւորե-  
ցան իրենց ամրացուցած դիրքը թողուլ և ետ  
քաշուիլ : Վաշնակից զօրքը, որոց անձամբ կը  
հրամայէր Վեդիկոյն զօրապետը, անմիջապէս  
ստիպեցին յիշեալ բլուրին . ուր շատ պատերազ-  
մական պաշարներ և թնդանօղներ թողուցեր  
էր թշնամին : Այս երևելի պատերազմին մէջ  
12000 հոգիի չափ Ռուս մեռան, իսկ գաշնակից  
զօրքէն մեռնողներուն և վիրաւորեալներուն  
թիւը 5000 հոգիի կը հասնի : Վանրոպեր և թո-  
մաս գաղղիացի զօրապետները ևս վիրաւորվե-  
րն . առաջինը թէթե վէրքով մը, իսկ երկրորդը  
կրտանդնուպօլիս բերուեցաւ, ուր ճարտար վե-  
րաբուժաց խնամքը յանձնուեցաւ . ըստորում  
ճանրկիկ վիրաւորուած է :

Այս փառաւոր յաղթութեանը համար կու-  
տանդնուպօլիս մէջ նաև Վրուսի հրապարակական  
ուրախութիւններ եղան և բազմաթիւ թնդա-  
նօթներ և հրացաններ արձակեցան :  
Վնոյս 17ին խորմի եզերքէն հասեր են ի  
կրտանդնուպօլիս մէկ անգղիական և մէկ գաղղ-  
իական շաքեռու, որոնք լուր բերեր են, թէ  
գաշնակից զօրքերը ամէն կերպ պատրաստութի-  
նները ի գործ գրած են և սեպտեմբերի 18ին  
պիտի սկսին եղեր յարձակիլ Վեդիկայոյ  
դէմ և պաշարել այս ահագին ամրոցը : Վեդ-  
հանրապէս կը կարծուի եղեր թէ յիշեալ քաղաքը  
երկար ժամանակ պիտի չկրնայ դէմ գնել և մինչև  
10-12 օր պիտի պարտաւորի անձնատուր ըլլալ :  
Ռուսաց զօրքը մեծ վնասութեան մէջ են ի  
Վեդիկայոյ, ուր քոլէսան մեծ կոտորած կրնէ

զգայունութիւնը կուեցրնէ, ու ամէն բանէն  
գիւրաւ գրգռուելու և շփոթուելու պատճառ  
կըլլայ . բայց ասանկ կնկան մը համար ալ շատ  
պատուաւոր բան է թէ որ ինք իր վրայ իշխելու  
ու տէր ըլլալու չափ սրտի ու մտքի հանդարտու-  
թիւն կուենայ :  
Շատ կանանց չափէ աւելի զգայունութիւնը  
ու փոփոխութիւնը կամ տկարութիւնը խափանե-  
լու համար՝ մեծապէս օգտակար բան մը կըլլար՝  
անոնց բարոյական յօժարութիւնները կամ բնա-  
ւորութիւնը պզտիկուց աղէկ կորգի դնել, ու  
անոնք կանուխկեկ կը թելը՝ որ կիրքերուն յաղ-  
թեն ու մտքերին ու սրտերին խաղաղ ու հան-  
գիստ պահեն : Վայց ափսոս, որ հասարակօրէն  
ասոր հակառակը կրտեսնենք . ինչու որ տղայու-  
թեան աստնին մանկական ու պարապ խաղա-  
լիկներով կամ զօրասաններու զբաղեցրնելով, ու  
անկից քիչ մը ետքն ալ՝ ծիծաղելի սովորութի-  
ններով ու շողբորթութիւններով անոնց վրէրը  
տկարացընելու և իրենց բուն վիճակին պարտ-  
քերը կատարելու համար անյարմար ընելու  
ճամբաներ կը բռնուին :  
Վրուսցնէ չենք կրնար կնիկէ մը պահանջել  
որ մարդկային կենաց մէջը հանգիպող ամէն ան-  
հանգստութիւնները ու ներութիւնները փիլիսո-  
փայական հանգարտութիւնով ու կործնութիւ-  
նով արհամարհէ ու բանի տեղ չիդնէ : Վայց աս

բանիս մէջը այնչափ խիստ չերթալով՝ սա կրնանք  
ըսել որ կանանց բնութեանը մէջը այնչափ ուժ-  
կը գտնուի՝ որ իրենց հոգեկան զօրութիւնները  
աւելի աշխոյժութիւնով բանեցընեն, որով և  
փոքր փոքր վիշտերը ու պատերազմները, թէ որ  
սաստիկ ու երկարատև չեն ըլլար, իրենց այն-  
չափ չեն վնասեր : Աս վիշտերը ու պատերազմնե-  
րը պէտք է որ անցաւոր անցելու պէս ըլլան .  
որոնք արևուն պայծառութիւնը քանի մը վայր-  
կեան կը գոցեն, բայց ոչ երբէք վնասակար  
մըրիկներ կը հանեն : Վնենէն աւելի ապահով  
ճամբան՝ յոյ կնիկներէն սրտերին ու մտքերին  
խռովելու պատճառները հեռացընել է : Թէ  
որ ամէն մարդ յոյ կնիկն մը հետ անանկ խնա-  
յելով ու զգուշութիւնով վարուելու ըլլայ,  
ինչպէս որ անոր վիճակը (հալը) կը պահանջէ,  
խեղճը շատ վախերէն ու սոսկուածներէն ազատ  
կըլլայ : Վսանկ յոյ կնիկ մը իր յոյութեան ժա-  
մանակը շատ հանգիստ կրնայ անցընել, թէ որ  
իր ամուսինը կամ երկը, ինչպէս որ իրենց ա-  
մուսնութեանը առջի օրերը խոստացեր էր, անոր  
անանկ տկարութեանը մէջը զօրաւոր պաշտպան  
ու պահապան կըլլայ, ու իր մայր ըլլալու մօ-  
տիկցող կնիկնը հաւատարիմ ու խանդակաթ ա-  
մուսինը ըլլալը իրօք ցուցընելու կաշխատի :  
Վրկան մը գլխաւոր պարտականութիւնը աս է՝  
որ իր կնիկնը, որուն որ սա (յոյութեան) վի-

ճակի մէջ մտնելուն ինքը պատճառ կեղու,  
ինամ տանի ու պահպանութիւն ընէ, ու ասան-  
կով ան զաւկին կատարեալ կեանքի հասնելու  
օգնէ՝ որուն հայր անուանիլ կուզէ : Վայց  
ստորին վիճակի մարդկան մէջը քանի քանի ան-  
ողորմ՝ երկինք կը գտնուին, որոնք իրենց կնիկը  
չափազանց գործքերով կամ աշխատութիւնով  
բոլորովին ուժէ կը ձգեն, ու իրենց արտառոց  
վարմունքովը ու յաճախ կուրծնելով կը քաշա-  
րեն, նաև անչափ արբեցուցութիւնով, իրենց հար-  
կաւոր գործքերուն մէջը ծոյլ ու անհոգ ըլլալով  
ու անկարգ կեանք անցընելով ստոկին և ու-  
նեցածնին կը մտնեն, ու ասանկով խեղճ կնիկնը  
չէ թէ միայն հանգիստը և ուրախութիւնը տակն  
ու վրայ կընեն, հասցա անոր հարկաւոր ապ-  
րուստն ալ բերնէն կը կտրեն կուռնեն . շատ հեղ-  
ալ անգութ անողորմ սրտով անիկա կը քաշարեն  
Իսկ վերի կամ բարձրագոյն վիճակի մէջ ալ քանի  
քանի երկինք կամ ամուսիններ կը գտնուին,  
որոնք իրենց անհաւատարմութիւնովը ու ան-  
կարգ վարքովը իրենց մտքերիմ խռովութեանը  
սրտին մէջը սոսկալից ցաւ ու կսկիճ տուող նա-  
խանձը կը խոթեն . և այսպէս իրենց զուակը  
դեռ կատարեալ չհաստուցած՝ կը շնչացընեն,  
կամ անոր բոլոր կեանքը կը թուաւորեն կապա-  
կանեն :  
Լ. Ե.  
(Մնացորդը հետեւեալ թուով)

